ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Թորոսյան,

ի պատասխան Ձեր 27.02.2024թ. գրության՝ տեղեկացվում է.

Օղակաձև այգու 4-րդ հատվածի՝ Սայաթ-Նովայի փողոցից մինչև Նալբանդյան փողոց ընկած տարածքում բնապահպանական, պատմամշակութային ժառանգության և բնապատկերային արժեքների պահպանման հիմնահարցերի փոխկապակցված լուծումներով նախատեսվում է վերակենդանացնել այգին, զարգացնել որպես միջազգային ստանդարտներին համապատասխան հանգստի և ժամանցի կազմակերպմամբ տարբեր տարիքի այցելուների կենսունակության բարձրացմանը նպաստող և սպասարկող մի վայր, ինչպես նաև զբոսաշրջային հանգույց՝ խթանելով զբոսաշրջության զարգացումը և առկա խնդիրներին տալ միասնական լուծում:

Այգու տարածքում կստեղծվեն, բացառապես, ժամանցի և հանգստի ապահովմանն ուղղված փոքրածավալ հասարակական նշանակության օբյեկտներ:

Հատակագծային օպտիմալ լուծումներով կստեղծվեն բարեկարգ ծառուղիներ ու ծաղկազարդ արահետներ, հետիոտնային շարժման համար ճեմուղիների և հետիոտնի արահետների ցանց, ջրային մակերեսներ՝ շատրվաններ, հարթ կառույցներ, սպորտային գոտիներ, ինչպես նաև հաճախորդների սպասարկման և զբոսայգու շահագործման համար նախատեսված այլ կառույցներ, հեծանվային ուղիներ, աստիճաններ, թեքահարթակներ ու բարեկարգման այլ տարրեր:

Միաժամանակ տեղեկացվում է, որ դիմումում բարձրացված այլ նորմատիվների վերաբերյալ պահանջները կքննարկվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի համաձայնեցման փուլում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ